

Ամենմեկ բլրակ՝ իր կանանչ ճակտին
 Կը կապե երփնած ծաղիկէ նարօտ:
 Ի՛նչ արբեցութեամբ դաշտերէն խորոտ,
 Եւ հարս հովիտէն՝ կարմըրոտանի
 Կ'առնէ արագիլն իր դարձին կարօտ:
 Ի՛նչ արբեցութեամբ սարեակներն, արթուն,
 Լո՛յսը կը ծըծեն, լո՛յսը կը հծծեն,
 1[1]Մրգաստաններու մեջէն սաղարթուն:
 Ի՛նչ արբեցութեամբ ձիւն ճայեր, ծըփին,
 Բարձրէն՝ օդաճեմ լիւղ կու գան. արփին
 Մեջ կ'ոսկեգօծին ու կը թեւանան:
 Ի՛նչ արբեցութեամբ տատրակն հարսենի,
 Առագաստ ըրած ծառի 1[1] հովանին՝
 Կըսպասէ տարփոտ իր վարուժանին:
 Ի՛նչ արբեցութեամբ թիթեռն է բացեր,
 Լեւակի մանրիկ լիճին 1[1] վրայ փրփրուն՝
 Առագաստաշէն իր կաթ թելիկներ:
 1[1]Ի՛նչ արբեցութեամբ ծիրանի դաշտին
 Շէկ ծաղիկներուն կը վազէ մեղուն,
 1[1]Ծըծել իգայի պտկունքներն հեշտին:
 Ի՛նչ արբեցութեամբ ծովերն են կապոյտ,
 1[1]Գետերն՝ յորդաջուր, աղբիւրներ՝ զեղուն,
 1[1]Լիճեր՝ խաժագոյն, առուն՝ շուտափոյթ,
 1[1]Լօռածամ առուն՝ որ կ'անցնի քովէ
 1[1]Ուռեստաններու գեջ, լսնակապոյտ:
 Ի՛նչ արբեցութեամբ ամպեր կը թօթուեն
 Յրաշալի հեղուկն իրենց ըստինքին՝
 Որ գերթ ասղանի վար կը սողոսկի՝
 Մարելու երկրին պասուքը ոսկի:
 Ի՛նչ արբեցութեամբ զայն կո՛ւշտ կը խըմեն
 Յամագրաւ տապէն սարսատած հողին
 Ծընունդներն ամեն, ծակտիքներն ամեն:
 Ի՛նչ արբեցութեամբ հոգին կ'ընդգրկէ
 Ալեակն յորդահոս՝ ծայրիի բոյրին,
 Ծաթրին, անանուխ, վայրի ռեհանի 1[1]
 Բազմաբուրումներն ըստաշխ ու խունկէ:
 Ի՛նչ արբեցութեամբ կ'ընդգրկէ անի.
 Բոլոր ձեւերն ու երանգներն ամեն,